ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

«29» 06 2020թ. ք. Երևան

ՀՐԱՄԱՆ N 134-Ա

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ, ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՉԱՓԱԳՐՄԱՆ (ՀԱՇՎԱՌՄԱՆ) ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1441-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի II. բաժնի 6-րդ կետի պահանջներով՝

1. Սույն հրամանով սահմանվում են ՀՀ տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովի կազմում որակավորված մասնագետներ ներգրավելու պահանջները:

2. Հանձնաժողովի կազմում համապատասխան ոլորտում գործունեություն իրականացնող որակավորված անձ ներգրավելու նպատակով՝ աշխատակազմը հրապարակում է հայտարարություն: Հայտերը ներկայացնելու համար սահմանվում է հայտարարության հրապարակման օրվանից երկշաբաթյա ժամկետ:

3. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները՝

1) հայտերը ներկայացնելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն և հայտեր ընդունելու հետ կապված պատասխանատու անձի հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հայտերի ընդունման օրերը և ժամերը.

3) հայտեր ներկայացնող հասարակական կազմակերպությանը ներկայացվող՝ պահանջները և հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

Կադաստրի
կոմիտե

4) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

4. Հանձնաժողովի կազմում որպես համապատասխան ոլորտի որակավորված անձ ընդգրկվելու հայտ կարող է ներկայացնել այն անձը, ով դիմելու պահին վերոնշյալ գործունեության բնագավառում ունեն գործողության ուժ ունեցող որակավորման վկայական, բարձրագույն մասնագիտական կրթություն (հողաշինարարության, գեոդեզիայի, քարտեզագրության բնագավառներում, ՀՀ տարածքում վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 5 տարի գործունեության ծավալում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության ոլորտում և չի հանդիսանում պետական կառավարման մարմնի աշխատակից:

5. Սույն պահանջների 4-րդ կետով նախատեսված անձը անդամության հայտի հետ միաժամանակ ներկայացնում են այն փաստաթղթերը (բնօրինակ կամ պատճեն), որոնք փաստում են սույն պահանջների 4-րդ կետով ամրագրված պայմանները: Հայտում նշվում է հանձնաժողովի կազմում առաջադրվող իր ներկայացուցչի վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն):

6. Հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) կարող են հանձնվել առձեռն, ուղարկվել փոստով կամ ներկայացվել հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված կամ ստորագրված և սկանավորված:

7. Փաստաթղթերն ընդունելու նպատակով՝ աշխատակազմում վարվում է համապատասխան գրանցամատյան, որում նշվում են հայտ ներկայացնողի վերաբերյալ հայտով ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերի ցանկը:

8. Փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքերում հայտ ներկայացնողը դրա մասին ծանուցվում է փաստաթղթերն աշխատակազմում ստացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր), և նրան տրամադրվում ծանուցումը ստանալուն հաջորդող օրվանից երկու աշխատանքային օր թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու համար:

9. Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում անձի ներկայացրած հայտին ընթացք չի տրվում:

10. Որակավորված անձի ներգրավումն իրականացվում է՝ փաստաթղթային եղանակով:

11. Ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն պահանջների 4-րդ կետի պայմաններին որոշվում է հանձնաժողովի քարտուղարի (այսուհետ՝ հանձնաժողովի քարտուղար) կողմից:

12. Եթե հայտատու անձի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են սույն պահանջների 4-րդ կետով սահմանված պայմաններին և ներկայացվել է ընդամենը մեկ հայտ, ապա նա ներգրավվում է հանձնաժողովի կազմում: Հայտատուների քանակը մեկից ավելի լինելու դեպքում, որակավորված անձը ներգրավվում է հանձնաժողովի կազմում աշխատակազմի ընտրությամբ՝ առաջնություն տալով համապատասխան որակավորված անձի գործունեության տևողությանը, աշխատանքային գործունեությանը:

13. Հանձնաժողովի անդամի թեկնածուին ընտրելուց հետո հանձնաժողովի կազմը ներկայացվում է կոմիտեի ղեկավարի հաստատմանը:

14. Համապատասխան ոլորտի որակավորված անձը հանձնաժողովի կազմում ներգրավվում են երկու տարի ժամկետով՝ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ:

15. Հանձնաժողովի կազմում համապատասխան ոլորտի հասարակական և գիտական կազմակերպության ներկայացուցչի ընդգրկվելու ժամկետի ավարտին նախորդող եռամսյակում կամ սույն պահանջներով սահմանված դեպքերում ժամկետից շուտ հասարակական կամ գիտական կազմակերպության ներկայացուցչի անդամությունը դադարեցնելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովին տրամադրում է տեղեկատվություն՝ համապատասխան անդամի անդամությունը երկարաձգելու կամ նոր անդամ ընտրելու վերաբերյալ:

16. Այն դեպքում, երբ հանձնաժողովը որոշում է կայացնում նոր անդամ ընտրելու վերաբերյալ, աշխատակազմը թափուր տեղ առաջանալու պահից երկշաբաթյա ժամկետում հրապարակում է հայտարարություն և սույն պահանջներով սահմանված կարգով ներգրավում նոր անդամի:

17. Հանձնաժողովի կազմում ընտրված որակավորված անձի անդամությունը հանձնաժողովի առաջարկությամբ կարող է դադարել, երբ հանձնաժողովի համապատասխան անդամն անհարգելի պատճառով առնվազն 3 անգամ չի մասնակցել հանձնաժողովի նիստին, կամ կասեցվել կամ դադարեցվել է համապատասխան անձի որակավորման վկայականի գործողությունը, կամ դադարել է համապատասխանել հանձնաժողովի անդամ ընտրվելու չափանիշները, կամ համապատասխան անձը ներկայացրել է անդամությունը դադարեցնելու մասին դիմում:

18. Որակավորված անձի՝ համապատասխան ոլորտի որևէ կազմակերպության հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը կամ դադարելը հանձնաժողովի անդամությունը դադարեցնելու հիմք չէ, եթե առկա չեն սույն պահանջների 17-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը:

Սուրեն Թովմասյան

X _____

Կադաստրի
կոմիտե